

արարեալ է Պատրի յակոբ Վիլօթին ի կարգէ Յնեանց .
 Որ եւ ի չորից Աւետարանչաց մեկնութիս, որ եւ ըն-
 թերցողքն դիւրաւ կարիցեն իմանալ, զմայլիլ, եւ լու-
 սաւորիլ այս Աճային բուրաստանէս. թէպէտ գոն
 ազգիս մերում յառաջագոյն Հին վարդապետաց մեկ-
 նութիւնք, բայց խրթնածածուկ բանքն ոչ են պար-
 զաբանեալ. Որ եւ վերոյ յիշեցեալ Յակոբ վարդապետ,
 ներշնչութիւն Հոգւոյն նրոյ, երկաքանչիւր ազգի յատինի,
 եւ Հայոց գրոց եւ բառիցն քաջ տեղեակ եւ Հմուտ
 գոլով. լոյս ածեալ է Տրունական բանքս այսոքիկ,
 բազում վարդապետութիւն պիտանաւոր բանս Շարայա-
 րեալ գտանի ի սմա իրս հաւատոյ եւ վարուց. այլ եւ
 վիճաբանութիս յոլովս, հայկական գրոց վկայութիւն, եւ
 խրատական բանս պարզ շարագրութիւն լստ ոճի հայոց.
 Որ եւ տեսողաց, եւ ընթերցողաց բազում օգտութիւն,
 եւ լուսաւորութիւն լինելոց է սովաւ. Ամէն.

Լ.ս Յարութի Արհեստակոպոս
 Կեսարիա Պալէստինոյ

Եւ իրօք արդէն 1712ին զինք ի Հռոմ կը
 գտնենք:

Յամին 1712 Մայիս 4ին, Վատիկանի պա-
 լատին մէջ կէս հրապարակական Համագումար
 Նիստ մը (Consistorium) խմբուած էր: Կղեմէս
 ԺԱ. Ս. Քահանայապետը՝ սրբացուցմանց համար
 պահանջուած խիստ քննութիւններն արդէն
 աւարտելէն ետեւ՝ Սուրբ պիտի հրատարակէր՝
 Պիոս Ե. Ս. Քահանայապետը, երկու լատին
 Քահանայ եւ մէկ կուսան: Սոյն Համագումարին
 մէջ, որ երեք Նիստ ունեցած է, բազմած էին
 Հռոմայ բոլոր կարգինալները, լատին, յոյն
 ասորի, քաղդէացի կաթողիկեայ Հայրապետներ:
 Այս բազմականաց մէջ էին նաեւ հետեւեալ